https://printo.it/pediatric-rheumatology/AM/intro

Մաջիդի համախտանիշը

Տարբերակ 2016

3. ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԸ

3.1 Ինչպե՞ս կարող է հիվանդությունը ազդել երեխայի և նրա ընտանիքի անդամների առօրյա կյանքի վրա:

Երեխան և նրա ընտանիքը կարող են ունենալ մեծ խնդիրներ, մինչև հիվանդության ախտորոշելը:
Որոշ երեխաներ ունենում են ոսկրերի դեֆորմացիաներ, ինչը կարող է լրջորեն խանգարել նորմալ ակտիվությանը: Մյուս խնդիրը ամբողջ կյանք տևող բուժումից առաջացած հոգեբանական բեռն է:

3.2 Ի՞նչ կասեք դպրոցի մասին:

Խրոնիկ հիվանդություն ունեցող հիվանդների համար կարևոր է կրթության շարունակումը: Կան որոշակի գործոններ, որոնք կարող են խանգարել դպրոց հաճախելուն, ինչի համար էլ կարևոր է բացատրել ուսուցիչներին երեխայի հնարավոր կարիքների մասին: Ծնողները և ուսուցիչները պետք է անեն իրենցից կախված ամեն ինչ, որպեսզի թույլ տան երեխային սովորական ընթացքով մասնակցել դպրոցական միջոցառումներին, ոչ միայն, որպեսզի երեխան լինի հաջողակ ուսման մեջ, այլ նաև որպեսզի ընդունվի և գնահատվի և՛ հասակակիցների, և՛ մեծահասակների կողմից: Ապագա ներգրավածությունը պրոֆեսիոնալ կյանքին երիտասարդ հիվանդի համար կարևոր նշանակություն ունի, և խրոնիկ հիվանդություններով հիվանդների գլոբալ օգնության նպատակներից մեկն է:

3.3 Ի՞նչ կասեք սպորտի մասին:

Սպորտով զբաղվելը ցանկացած երեխայի ամենօրյա կյանքի կարևոր մասն է։ Բուժման նպատակներից մեկն է,որ երեխաներին տրվի հնարավորություն նորմալ կյանք վարել և որ իրենք իրենց չտարբերակեն իրենց հասակակիցներից։ Երեխան կարող է զբաղվել իրեն ի զորու բոլոր ակտիվություններով։ Սակայն, հիվանդության սրացումների ժամանակ անհրաժեշտ է սահմանափակել ֆիզիկական ակտիվությունը և հանգստանալ։

3.4 Ի՞նչ կասեք սննդակարգի մասին:
Չկա որևէ յուրահատուկ սննդակարգ։

3.5 Կարո՞ղ է կլիմնա ազդել հիվանդության ընթացքի վրա:
Ոչ։

3.6 Կարո՞ղ է երեխան պատվաստվել:
Այո, երեխան կարող է պատվաստվել։ Սակայն, ծնողները պետք է խորհրդակցեն իրենց բուժող բժշկի հետ կենդանի թուլացված պատվաստանյութերով պատվաստվելու վերաբերյալ։

3.7 Ի՞նչ կասեք սեռական կյանքի, հղիության և հակաբեղմնավորիչների մասին:
Մինչ այժմ գրականության մեջ չկան նման տեղեկություններ մեծահասակ հիվանդների մասին։ Որպես ընդհանուր օրենք, մնացած աուտոբորբոքային հիվանդությունների նման, ավելի լավ է հղիությունը նախապես պլանավորել, ինչը թույլ կտա նախօրոք հարմարեցնել բուժումը, հաշվի առնելով պտղի վրա կենսաբանական ագենտների հնարավոր կողմնային ազդեցությունները։